**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**«ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ**

---

« 08 » օգոստոսի 2025 թ. N 11-25

Տիգրան Իսկոյան Ա/Ձ-ի տնօրեն
Տիգրան Իսկոյանին
(Հասցե՝ ք.Երևան, Միկոյան 5, 12 ա)
(էլ. փոստ՝ Tigran.Iskoyan@mail.ru )

**Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ**

չիրականացված մատակարարման մասին

Հարգելի՛ գործընկեր,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Տիգրան Իսկոյան Ա/Ձ-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 5-ին կնքվել է «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/2-Վ-13» պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրով և մատակարարման ժամանակացույցով նախատեսված ապրանք (շոկոլադ):

2025 թվականի հուլիսի 18-ին «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է հայտ-պահանջագիր, որով մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի հուլիսի 21-ը ներառյալ, սակայն մինչ օրս ապրանքը չի մատակարարվել (կցվում է հայտ-պահանջագիրը):

Խնդրում եմ երկու աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 12.08.2025թ. ժամը 15:00-ն ներառյալ) մատակարարել պահանջագրում ներկայացված ապրանքը, այլապես «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կձեռնարկվի պայմանագիրը միակողմանի լուծման գործընթաց:

Առդիր՝ 1 էջ:

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԽԼՈՅԱՆ

---

Հասցե՝ ՀՀ, ք. Վարդենիս, Զ. Անդրանիկի 4, 1-ին նրբ., էլ.փոստ՝ vardenisinternat@mail.ru